


ըատ»-ի բուն ծրագրին վերաբերող հարց՝ ցանկալի է, որ «Արարատ»-ը բաց անէ իր լայն էջերը այս և որու նման անհետաձգելի խնդիրների համար:

Յաջորդ անդամ կիսոսեմ սրբազան Առաջնորդին ներկայացրած խնդրի կէտերի մասին:

Սարգիս սարկ. Խուցեանց.



Տիխիսի Հայոց Եկեղեցիների սարկաւագների եւ
դպիրների խնդրագիրը թեմակալ առաջնորդին
Վրաստանի եւ Խմերի:

Զերդ սրբազնութեան շնորհաբեր գալստեան առթիւ
Տիխիսի սարկաւագներիս և դպիրներիս սրտերում ծագեց խո-
րին հաւատ մեր կետնքի ըարելաւութեան նկատմամբ, և այդ
հաւատը առաջ բերեց մեր մէջ Զերդ սրբազնութեան այն յու-
սագըող և ըազմաբովանդակ խօսքերը թէ՝ «Ես լոել եմ, որ
Տիխիսի քահանաները ոռհասարակ վատ են վերաբերում դէպի
Զերդ մնչում են. իմ գուռու միշտ բաց է և դուք ազատ կերպով
կարող եք ձեր բողոքներն ինձ յալտնել և ես հայրաբար կօգ-
նեմ ձեզ կարողութեանո չտիփ»:

Մինչև այժմու այդ պիսի գորովագութ խօսքեր չէինք լսել
մեր բարձր իշխանութեան բերանեց անսովոր աւետիք էր այդ
մեզ հոմար, անսովոր, բայց ներկայիս համար անհրաժեշտ:

Ուկային որչափ ցանկալի և ուրախալի կլինէր բողոքի հա-
մար աեռնել Զերդ սրբազնութեան այդ աւետիքի կատարումը
մեր անմիթար, չարքաշ և զրկանքներով լի օրերում:

Դուք, Սրբազան Հայր, գիտակցելով տիթացու կոչուած
երաւազութեալակարգի կատակարգի կարիքները և իրական աննախանձելի
վիճակը, Զերդ այդ խօսքերով վատահութիւն ներշնչեցիք մեզ մեր
կարիքների և նեղութիւնների ժամանակ գիմելու Զերդ բարձր
հովանաւորութեանը՝ իրեւ մի հմտա բժշկի, արդար դատա-
ռորի, սպեզանի ստանալու մեր վերքերին, վերականգնելու մեր
պանակու եղած իրաւունքները և հայրական սիրովանք գտնելու
մեր զրկուած վիճակի համար:

Սրբազնութեանդ այդ խօսքերը իրաւունք են տալիս մեզ
նկատելու յանձնին Զերդ բարձր մարդասիրական զգացմունքներ

և լուսամիտ պաշտպան մեր արդարացի իրաւունքների; Եւ ահա այդ բանից իրախուսուած վոտահօրէն ներկայացնում ենք 2երդ Սրբազնութեանը մեր վիճակի իսկական նկարագիրը:

Իւրաքանչիւր հաստատութեան մէջ ժառայողների կամ դասակարգի իրաւունքները և պարտականութիւնները պէտք է որոշուած լինին, որի հիմքը պէտք է կազմէ մարդկային իրաւունքների պաշտպանութիւնը, որ կամայականութեանց պատճառ և շահագործութեան աղբիւր չգտառնայ:

Մինչև այսօր Տիֆլիսի սարկաւագների և դպիրների իրաւունքներն և պարտաւորութիւնները որոշ կերպով չեն սահմանուած, և այդ պատճառով նրանք չեն վայելում իրենց կոչման արժանի իրաւունքները և դարձած են մեծ մասամբ քահանայի քմահանոյքներին Ենթակայ մի մարմեն, կամ քահանայի սոսկ սարուկ առանց իրաւունքների, և ոչ թէ տաճարի սպասաւոր:

Ցաւօք որտի պէտք է խոստովանել, որ քահանաները շնանաշելով այդ իրաւունքները, չափազանց ընդարձակել են նրանց պարտաւորութիւնների սահմանը և հասցել են այն աստիճանի, որ այդ պարտաւորութիւնների շրջանում մտնում են և քահանաների առանցին ժառայութիւններ կատարելը:

Ցաւալի գրութեան մէջ է և մեր զբարմական վարձատրութիւնը: Այնելով իրաւագութիւն և կախուած քահանայի քմահանոյքից, մննց Ժողովրդի տութքերից՝—որ ոչ թէ միայն քահանայի, այլ և տիրացուի համար ապրուստի աղբիւր պէտք է լինէր՝—ստանում ենք կամայական մի չնչին մասն, այն էլ միայն որոշ օրինակատարութիւններից: Այս գէպքում մենք չգիտենք մեր իրաւունքի չափը, ինչպէս այդ դիտեն օտարադաւան Եկեղեցիներում. և այդ պատճառ է դառնում բազմաթիւ անախորժութիւններին:

Ի հարկէ մոքք ի շատէ մարդկային արժանաւորութիւնների դիտակից և գլուխաւարտ սպասաւորի համար ծանը է այսպիսի հանգամանքներում ժառայելը, և եթէ այսօր Տիֆլիսի սպասաւորների մի չնչին մասն է մոքք ի շատէ համապատասխանում բառի բուն նշանակութեամբ իւր կոչմանը՝ այդ է պատճառը: Բայց չէ որ սպասաւորների լաւ կազմը մեծ նշանակութիւն ունի ապագայում լաւ քահանաներ ունենալու համար. հետեւապէս և հիմքը պէտք է լաւ զբուի:

Բարեկաւել մեր վիճակը, որոշել մեր իսկական իրաւունքները և պարտականութիւնները՝ անյետաձգելի մի հարց է մեզ համար, Էական մի պահանջ. մինչև երբ պէտք է տանենք այս անորոշ դրութիւնը, իրեւ ենթակայ քահանայից բարեհայեցու:

զութեան, նրանց ձեռքից ողորմութիւն ստացող մի դասակարգ գութեան ընդ սմբն ամենախոնարհաբար ներկայացնելով Զերդ սրբազնութեան մեր կարիքների մի շարք, որ անհրաժեշտ համարեցինք ծրագրել մեր ներկայ գրութեան բարեփոխման համար՝ լիայոյն ենք, որ Զեր հայրական և իշխանական բարձր ու շադրութեամբ կստանան իրենց լուծումը:

1) Խնդրում ենք սպասաւորների նիւթական միջոցներով հիմնել ընթերցարան Վանաց Մայր եկեղեցու բակում դժոնուած աղատ սենեակներից մէկում և կամ մի այլ յարմար տեղ, որից օդուեն ոչ միայն իրենք սպասաւորները, այլ և ցանկացողները քահանայական դասից:

2) Խնդրում ենք, որ այսուհետեւ ընդունուող սպասաւոր դպիրը կամ սարկաւագը ունենայ կրթութեան որոշ ցենզ (առանուազը թեմական դպրանոցի Դ. դասարանի) վորքը և շատեապատրատականութիւն եկեղեցական երգեցողութեան մէջ, մաքուր անցեալ և գոնէ միջակ յաջողութեամբ ձայն ընդունելութիւնը պիտի հաստատուի հոգեսոր իշխանութեան միջոցով և անհրաժեշտ դէպքում, երբ յանցաւոր է նկատում, արձակուի նոյն իշխանութեան գիտութեամբ:

3) Խնդրում ենք ներկայ սպասաւորական կազմի մէջ եղած արժանաւորների համար կազմել շտամ:

4) Խնդրում ենք, որ սպասաւոր դպիրը կամ սարկաւագը ճանաչուի իրեն օդնական քահանայի նրա սբբազնագործ օրինակատարութիւնների և ծիսակատարացութիւնների մէջ, իրեն զուտ եկեղեցու սպասաւոր և ոչ թէ օրպէս տիրացու՝ ներկայ հասկացողութեամբ՝ քահանայի անմիջական տրամադրութեան տակ գտնող մի իրաւագուրկ անձնաւորութիւն, շատ անդամ ստիպուած կատարելու նրա համար իւր կոշմանը միանդամայի անվայել ժառայական պարտաւորութիւններ:

5) Խնդրում ենք, որ սպասաւորներին անպատճառ ռոճիկ տրուի եկեղեցուց և այդ այն չափով, որ բաւարարութիւն տայ նրան օրինակատարութիւններից ստացած միջոցներով հանդերձ՝ վարելու գոնէ համեստ կեանք:

Գնահատելով օրինակելի ժառայութիւնը, պարբերաբար աւելացնել նրա ռոճիկը:

6) Խնդրում ենք, որ դպիրը ստանայ եկեղեցական բոլոր օրինակատարութիւններից, ինչպէս նաև տնօրհնէքից և դերեզմանօրհնէքից քահանայի ստացած եկամուտի մի քառորդը, իսկ սարկաւագ սպասաւորը՝ մի երրորդ մասը, կցուած այդ եկամուտներին և սպասաւորի համար ստացած մասը:

Մանօրուքիւն. — Ներկայումս սպասաւորը ստանում է կամացական մի մաս միայն (մեծ մասամբ քահանայի միջոցով) պահեց, միլլառութիւնից, թաղումից, հոգեհանգստից, եօթն և քառասուն պատարագներից, տնօրհնէքըց, գերեզմանօրհնէքըց և այն շատ անբաւարար չափով. բոլորովին չէ ստանում հինգ նաւակատիքներից, պատարագի ժամացից, հոգոցներից ստացած արգիւնքից, տուն փարատելու Աւետարանի փողից, կողոպուտից, շաքարից, գագաղի փելոններից և բոլոր օքինակատարութիւնից մնացած կիսայրեալ մոմերից:

7) Խնդրում ենք մէկ քառորդ և սարկաւագ սպասաւորի համար մի երրորդ մաս զանազան ժամանակներում այս կամ այն բարերարացներից եկեղեցական պաշտօնեաններին կտակած այն անձեռնմխելի դումարների տոկոսներից, որոնք կտակակատարաների կողմից յատկացուած են ոչ թէ բացառապէս քահանաներին միայն, այլ անկարեած անխտիք կերպով ամբողջ միաբանական և սպասաւորական կազմին: Աւելսրդ չենք համարում յիշել այսամեղ մեր եկեղեցու հին կարգը արդիւնաբաշխութեանց վերաբերեալ, որ կազմուել է ներսէս Բ. Աշտարակեցու ժամանակ 527 թ. Դւինում գումարած ժողովում, ուր ի միջի այլոց որոշում է. «տուքը եկեղեցւոյ ըստ օքինի բաժանեացին՝ աւագ երիցունց երիցունց երկու և կէս մասն, հառարակ քահանից՝ երկու մասն, սարկաւագաց մի և կէս մասն, դպրաց... մի մասն»: Տես պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ Աքէլ արքեպիսկոպոսի Մխիթարեանց երես 79 ԺԴ., սրանից պարզ է, որ մեր ինդրածը աւելի քիչ է:

8) Խնդրում ենք ընդունել ամբողջ սպասաւորական մարմընին «Ճիխիսի Հայ հոգեւորականաց ապահովութեան գանձարան»-ին երբեք անդամ, որոշ իրաւունքներով *):

Սօրագրութիւններ 60-ի չափ:



*) Մ. Խ. Այս հանրագրի առթիւ մենք կը խօսենք հետեւեալ համարում: